361
Թ-31

ԸՆԴՀՈՎԱՆԵԱՒ

ԱՐԵԳԱԿՆԱՓԱՅԼ ՇԱՀՆՇԱՀԻ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԵՒ

ՀԱՇՈՒԵՑՈՅՑ

ԹԱՒՐԻԶԻ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1906 — 1907

370
Զ349-Տ6

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

ԹԱՒՐԻԶ

Ատրպատ. Հայոց Թեմական արագատիպ
Ցեասեան փողոցի Եղիազարի Միրզաբէկեանի

361
P-31
18 APR 2013
1 MAR 2010
ՀԱԽՍՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI - 1922
имени А. Мясникяна
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԸՆԴ ՀՈՎԱ[illegible]

370
Ջ349-Տէ

ԱՐԵԳԱԿՆԱՓԱՅԼ
ՇԱՀՆՇԱՀԻ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԵՒ

ՀԱՇՈՒԵՑՈՅՑ

ԹԱՒՐԻԶԻ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1906 — 1907

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

1004
15820

ԹԱՒՐԻԶ

Ատրպատ. Հայոց Թեմական արագատիպ

Յիշատակ վաղամեռիկ Եղիսաբէթ Միրզաբէկեանի

42.768

Ինչպէս նախորդ, նոյնպէս և այս տարեշրջանում ընկերութեանս վարչութիւնը ճիգ է թափել իւր ամբողջ ուշադրութիւնը կենդրոնացնել կրթական գործի շուրջը Ատրպատականի զանազան կողմերում ցրուած, «աչքից հեռացուած, մտքից մոռացուած» հայկական գաւառական շրջանակներում։ Սակայն, ինչպէս յաճախ շեշտուած է մեր նախորդ տարիների տեղեկագրերի մէջ, մեր գաւառներում կրթական գործի կարիքը այնքան մեծ է, այնքան զգալի և ստիպողական, որ ընկերութեանս և իւր հետ ձեռք ձեռքի տուած իրան աջակցող բարերարների արած նիւթական ու բարոյական զոհողութիւնները շատ քիչ են յիշեալ ծով կարիքներին բաւականութիւն տալու համար։ Յաճախ հանրագրութիւններ և աղերսագրեր ենք ստանում զանազան գիւղական համայնքների կողմից, որոնք խնդրում, աղաչում են ընկերութեանս՝ իրանց գիւղերում էս դրպոցներ բանալ և իրանց մատաղ սերնդին էս մասնակից անել ուսման ու կըրթութեան կենսապարար ճառագայթներին։ Եւ ամեն անգամ երբ ընկերութիւնս միջոցներ է ունեցել մի նոր դրպրոց էս բանալու, երկար ժամանակ մտահոգութիւն է ունեցել թէ ուր, որտեղ բանալ դպրոցը, որ աւելի անհրաժեշտը համարի, ըստ որում ամեն տեղ միևնոյն պահանջն է զգացուում, ամեն տեղ միօրինակ խորին տգիտութեան խաւարն է տիրապետում։ Սակայն շնորհիւ ընկերութեանս երկար տարիներից իվեր թափած ջանքերի և իրան աջակ-

ցող բարերարների և մասնաւորապէս շնորհիւ Պ. Տիգրան Աֆրիկեանի, որը տարեց տարի աւելացրեց իւր հաշւով հիմնուած դպրոցների թիւը, այսօր այն բոլորը տեղերից։ ուր դպրոցները գործում են, մխիթարական ձայներ են լսւում։ Արդարև ի՞նչ կայ աւելի մխիթարական, աւելի ուրախացուցիչ քան այն հանգամանքը, որ այսօր բազմաթիւ թրքախօս հայ գիւղերում ունենք մի նոր սերունդ, որ խօսում, գրում է իւր մայրենի լեզուով և խորհում, մտածում է որպէս հայ, և որ այդ մատաղ սերնդի շնորհիւ հայ լեզուն հետզհետէ մուտք է գործում նաև ընտանիքների մէջ կապելով, միացնելով նրանց հայութեան ընդհանուր զանգուածի հետ։

Այս բոլորը վերին աստիճանի մխիթարական է. սակայն դեռ քանի քանի գիւղեր իրենց հարիւրաւոր հայ բնակիչներով գտնւում են խաւարի և տգիտութեան մէջ, զուրկ ամեն տեսակ ազգային ու բարոյական մխիթարանքից, զուրկ ուսման և կրթութեան բարիքներից, տնտեսապէս բոլորովին քայքայւած, քաղաքականապէս անսահման ճնշւած ու ստրկացած։ Ահա այս հանգամանքի վրայ ենք հրաւիրում մեր բարերարների և ընդհանրապէս հայ հարուստների և հայ մտածող հասարակութեան ուշադրութիւնը։ Կոչ ենք անում բոլոր նիւթապէս և բարոյապէս կարող անձանց՝ աջակից և զօրավիգ հանդիսանալ ընկերութեանս, որպէս զի նա կարող լինի հետզհետէ աւելի անթերի կերպով կատարել իւր վրայ ծանրացած պարտականութիւնները, բաւականութիւն տալով մեր գիւղական համայնքների ժամանակակից պահանջներին։ Թեթևացնել մեր ազգակիցների անտանելի դրութիւնը, տալ նրան գիտակցութիւն ճանաչելու և ըմբռնելու այն բոլոր հանգամանքներն ու երևոյթները,

որոնք պատճառ են հանդիսանում իւր անսահման թշւառութեան—ամեն մի հայ անհատի համար ամենամեծ մարդկայնութիւնն է։

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ.

Ներկայ տարեշրջանում ընկերութեանս հաստատութիւնների թիւը հակառակ մեր ցանկութեան և ջանքերի մնաց նոյնը ինչ որ ունէինք նախորդ տարին։ Ընկերութիւնս ներկայ տարեշրջանում ունեցել է 11 գիւղական ուսումնարաններ, որոնցից 7-ը երկսեռ են, և երկու մանկապարտէզներ Թաւրիզում։ Այս հաստատութիւնների մանրամասն տեղեկագիրը գտնւում ենք առանձին յօդւածներով. բացի սրանից նա պահել է Թաւրիզում նաև մի գրադարան-ընթերցարան յատկապէս տիկնանց և օրիորդների համար, որից սակայն դժբաղդաբար շատ քիչ օգտւողներ կան։

Իբրև որդեգիրներ, ընկերութիւնս պահել է Արամեան դպրոցում Բարանդուզցի երեք աշակերտներ, որոնք աւարտելուց յետոյ ուսուցչի պաշտօն պէտք է վարեն իրենց հայրենի գիւղերում։ Ներկայ տարեշրջանով չորրորդ տարին է որ այս սաները պահւում են ընկերութեան հաշւով, վարչութեանս անմիջական խնամքի ներքոյ։

Վարչութիւնս ըստ կարողութեան նպաստներ է տրւել աղքատ և չքաւոր անձանց և ընտանիքների։

Վարչութիւնս կազմակերպել է յօգուտ ընկերութեան թատերական ներկայացում, զուտ արդիւնք ունենալով 1089 ղրան. տու այդ շնորհակալութիւն ենք յայտնում դերակատարներին և բոլոր մասնակցողներին։

Վարչութիւնս սոյն տարեշրջանում ունեցել է 43 նիստ և միքանի խորհրդակցական ժողովներ։ Երկու անգամ ընդհանուր ժողով է գումարել և ներկայացրել նրան իւր վեցամսեայ հաշուեցոյցը։

Տարեմուտի երեկոյին կազմակերպել է տօնածառի հանդէս, ուր երեխաներին բաշխուել է շաքարեղէն և խաղալիքներ։

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՍՏԱՑԱԾ ՆՊԱՍՏՆԵՐԸ.

Վարչութիւնս 1906—1907 տարեշրջանի ընթացքում շնորհակալութեամբ ստացել է հետեւեալ նպաստները.

Պարոն Տիգրան Ա.Ֆրիկեանից եօթն ուսումնարանների ծախքը . . . 20000 դրամ.

Պարոն Ալէքսան Մելիք Ազարեանից մէկ ուսումնարանի ծախքը . . . 1520 դրամ.

Պարոն Ստեփան Տէր-Օհանեանից մէկ ուսումնարանի ծախքը . . . . 1200 դրամ.

Պարոն Կարապետ խան Զոհրապեանից (Համադան) նուէր . . . . 250 դրամ.

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՍ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Մանկապարտէզներ Թաւրիզում

Ընկերութիւնս Թաւրիզի հայոց երկու թաղերում Ղալայում և Լիլաւայում պահում է մանկական պարտէզներ։ Մանկապարտէզները բացուել են Սեպտ.-ի սկիզբներին և փակուել Մայիսի վերջերին։ Ղալայի մանկապարտէզը ունեցել է 38 երկսեռ սաներ, որոնցից 25 թոշակաւոր իսկ մը նացեալ 13 ձրիաւարժ. Լիլաւայի մանկապարտէզը ունեցել է 42 երկսեռ սաներ, որոնցից 25(*) թոշակաւոր են եղել իսկ 17-ը ձրիավարժ։ Թոշակների քանակը նշանակուել է ըստ կարողութեան ծնողների։

Երկու մանկապարտէզներում աւանդուել են—տարրական գիտելիքներ թուարանութիւնից, կենդանաբանութիւնից, բուսաբանութիւնից, աշխարհագրութիւնից և գծագրութիւնից։ Սաքա եղել են խաղալիքների, պատկերների, ձեւերի, խաղերի և զբօսանքների միջոցով։ Ձեռագործից՝ հիւսել են կողովներ, կարպետիկներ և ամաններ։ Սովորել են մանկական պարեր, երգեր և ոտանաւորներ։ Սովորել են նաև մանկական փոքրիկ բարոյակրթական պատմութիւններ և հէքեաթներ։

*) Սրանցից 13 ի տարեթոշակները գանձուած է Լիլաւայի դրպրոցների վարչութեան կողմից (պարտադիր ուսման հարցի ժամանակ) և մինչև այժմ չէ վճարուած վարչութեանս։

ԴՊՐՈՑՆԵՐ ԳԱՒԱՌՆԵՐՈՒՄ

1.

ԲԱԲԸՌՈՒ ԴՊՐՈՑ.

Բարանդուզ գաւառում.

Բարեւարը պ. Տիգրան Ա.Քրիկեան.

Ուսումնարանի բացումը տեղի է ունեցել Հոկտ. 2-ին իսկ ընդունելութիւնը տևել է մինչև դաշտային աշխատութիւնների վերջանալը։ Կանոնաւոր դասաւանդութիւնը սկսել է Դեկտեմբերի սկիզբներին և շարունակել է մինչև Մայիսի սկիզբը։ Զատկի արձակուրդից յետոյ դաշտային աշխատութիւնների վերսկսելու պատճառով՝ աշակերտների թիւը սկսել է նւազել և մինչև ուսումնական տարւայ վերջը նրանց թիւը հասել է 20 - 25 - ի։ Ուսանողների ամենամեծ թիւը ստացել է ձմեռային ամիսներում. ընդամենը 75 հոգի, որոնցից 50-ը տղայ, 35 ը աղջիկ։ Այս ուսումնարանից օգտւել են նաև Սարդարութ, Դառբառու և Թաղէքէնդ գիւղերի երեխաները, որոնցից սակայն սահմանափակ թւով է ընդունել տեղի սղութեան պատճառով։ Ուսումնարանը ունեցել է 5 բաժանմունք և երկու ստորաբաժանմունքներ. պաշտօնավարել են երկու ուսուցիչ և մէկ վարժուհի. շաբթական դասերի թիւը եղել է 84։ Ուսուցիչները կազմակերպել են աշակերտական ցերեկոյթ-հանդէսներ և զբօսանքներ։ Դասական առարկաները բաշխած են ձրի։

Ամենաանհրաժեշտ և ստիպողական կարիքը ուսումնարանի համար սեփական և քիչ-շատ յարմար շէնք ունենալն է, որից զուրկ է այս դպրոցը։ Գիւղացիների տնտեսական աղքատ վիճակը, տղամարդկանց մեծ թւով պանդխտելը և բնական ու արհեստական պատճառներից առաջացած կենսական մթերքների խիստ սղութիւնը ստեղծել են այնպիսի դրութիւն, որ անկարելի է գիւղացիների միջոցներով շէնք կառուցանելը՝ մնում է յուսալ բարերարների զոհաբերութեանը։ Ներկայ դպրոցական շէնքը որ վարձով է վերցուած, խիստ անյարմարութիւններ ունի թէ առողջապահական տեսակէտից և թէ փոքրութեան. այնպէս որ շրջակայ գիւղերից դիմող բազմաթիւ աշակերտների ընդունելութեանը արգելք է լինում։ Եթէ այս գիւղի ուսումնարանը սեփական և յարմարագոյն շէնք ունենայ և ուսուցիչների թիւը մէկով կամ երկուսով աւելացուի՝ ուսումնարանը կենտրոնականի ձև կստանայ և մեծապէս օգտակար կը լինի Բարանդուզի ամբողջ գաւառի համար։

Գիւղի հայերը բոլորն էլ թրքախօս են. բայց շնորհիւ այս ուսումնարանների իննամեայ գոյութեան՝ մանուկ սերունդը խօսում է մաքուր արարատեան բարբառով։

2.

ԴԻԶԷԹԷՔԻ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑԸ

Բարանդուզ Գաւառում

Բարեւար պ. Տիգրան Ա.Քրիկեան

Ուսումնարանի բացումը տեղի է ունեցել Հոկտ. 9-ին. ընդունելութիւնները տևել են մինչև Դեկտեմբեր. կանոնաւոր դասաւանդութիւնը սկսել է Նոյեմբերից և տևել է մինչև Մայիս։ Երկսեռ սաների թիւը եղել է 38.

21 տղայ, 17 աղջիկ։ Դարնան սկզբներից այդ թիւը նուազել է և ուսում. տարեայ վերջին հազիւ մնացել են 4-5 հոգի։ Ուսումնարանը ունեցել է 6 բաժանմունք, պաշտօնավարել են մի ուսուցիչ և մի վարժուհի, շաբաթական ուանդուած է 55 դաս։

Այս դպրոցը ևս սեփական շէնքից զուրկ է և գիւղացիները անկարող են վճարել իրանց զաւակների դասական պիտոյքներն անգամ. բաշխուած դասական առարկաների դիմաց հազիւ գանձել է 11 ղուռն միայն և մի պարոնից (Սայեադ Փարհատեան) ստացել է 14 ղուռն Նուէր։

Այս գիւղի հայերն էլ թրքախօս են. սակայն շնորհիւ ուսումնարանի, որը եռամեայ գործունէութիւն ունի՝ մանուկ սերունդը արդէն խօսում է արարատեան բարբառով։

Այս դպրոցում սովորել են նաև մի քանի տասրի երեխաներ։

3.

ԻՔԻ - ԱՂԱՋԻ ԵՐԿՍՆԻ ԴՊՐՈՑԸ

Ռուսիի Նազլոռ-Հայ գաւառամասում

Բարեբար պ. Տիգրան Ամիրիկեան

Ուսումնարանը բացել է Հոկտ. 16-ին 14 աշակերտներով և ընդունելութիւնը տևել է մինչև Նոյեմբեր վերջը. երկսեռ սաների թիւը հասել է մինչև 39. 26 տղայ, 13 աղջիկ։ Կանոնաւոր դասաւանդութիւնը սկսել է Նոյեմբեր վերջերից։ Գարնան սկզբներից. գաշտային աշխատութիւնների վերսկսելու պատճառով աշակերտների թիւը սկսել է

հետզհետէ նուազել. այնպէս որ մինչև Մայիսի 9-ը մնացած են եղել 8-10 հոգի։ Դպրոցը ունեցել է 4 բաժանմունք և 2 ստորաբաժանմունք. պաշտօնավարել են մէկ ուսուցիչ և մի վարժուհի, շաբաթական պարապելով 68 դաս։ Դպրոցական ուժերով կազմակերպել է մի երեկոյթ և մի ներկայացում, որոնք շատ լաւ տպաւորութիւն են թողել գիւղացի հասարակութեան վրայ։

Ուսումնարանը 8 տարի է գոյութիւն ունի. գիւղացիները խօսում են հայերէն, տեղական բարբառով. չը նայելով որ սրանց տնտեսական վիճակն էլ աննախանձելի է, բայց շնորհիւ դպրոցի ուրամնայ գոյութեան և միևնոյն ուսուցչի եռանդուն գործունէութեան, գիւղացիները սկսել են ճաշակել ուսման քաղցրութիւնը և օգտակարութիւնը և լաւ վերաբերմունք են ցոյց տալիս դէպի դպրոցական գործը, այնպէս որ այս տարի շատերը վճարել են իրանց երեխաների դասական առարկաների արժէքը։ Գիւղացիները իրանք են վճարել նաև դպրոցական մանր-մունր ծախքերը (վառելափայտ և այլն։)

4.

ՆԱԽՋԻՒԱՆ-ԹԻՓԼԻ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑԸ

Նազլոռ - Հայ Գաւառամասում

Բարեբար պ Տիգրան Ամիրիկեան.

Ուսումնարանի բացումը տեղի է ունեցել Նոյեմբեր 13 ին 15—20 երկսեռ աշակերտներով. ընդունելութիւնը տևել է մինչև Դեկտեմբեր։ Ձմեռային ամիսներում

աշակերտ-աշակերտուհիների թիւը հասել է 84-ի, 62 տղայ, 22 աղջիկ։ Դպրոցը ունեցել է 4 բաժանմունք և մէկ ստորաբաժանմունք. պաշտօնավարել են մի ուսուցիչ և մի վարժուհի. շաբաթական դասերի թիւը եղել է 60։

Գիւղը զուտ հայաբնակ է. Խօսում են հայերէն տեղական բարբառով. կան և շատ ու քիչ հարուստ ընտանիքներ։ Դպրոցը երբեմնակի ընդհատումներով գործում է 15 տարուց ի վեր, սակայն չնայելով այս բոլոր նպաստաւոր պայմաններին հին սերունդը բոլորովին խաւարամիտ է և կատարեալ անտարբեր դէպի կրթական գործը. միայն մատաղ սերունդն է որ յոյս է ներշնչում մօտիկ ապագայում կազմելու մի գիտակցող հասարակութիւն։

Դպրոցը փակուել է Մայիսի 15-ին. ուսումնարանն ունի սեփական և յարմարաւոր շէնք։

Այս ուսումնարանից օգտուել է նաև մօտակայ Իսաու գիւղը որտեղից եկել են 14 աշակերտներ։

5.

ՓԱԽԿ-ԲԷԿԼՈՒԻ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑ.

Նազլու-Չայ Գաւառամասում

Բարեւար պ. Տիգրան Ածրիկեան.

Ուսումնարանը բացուել է Հոկտեմբեր 20-ին և փակուել Մայիս 27-ին։ Ձմեռային ամիսներում աշակերտների թիւը եղել է 45, որոնցից 8 ը աշակերտուհիներ էին։ Ուսանողներից 13 հոգին եկել են մօտակայ Բէդրլըօ գիւղից։

Ուսումնարանը ունեցել է 4 բաժանմունք և երկու ստորաբաժանմունք. պաշտօնավարել են մի ուսուցիչ և մի ուսուցչուհի. շաբաթական աւանդուել է 58 դաս։ Դրուել են հանդէսներ Նոր տարուայ և Վարդանանց տօնի առթիւ։

Սոյն ուսումնարանը երեք տարի է որ գոյութիւն ունի. շէնքը վարձու է և անյարմար։ Գիւղը զուտ հայաբնակ է, մօտ 30 տուն, բոլորն էլ չքաւոր ու աղքատ, ներկայ տարեշրջանի ամբողջ ընթացքում մեծ մասը մուրալով են ապրել; տարուայ վերջերին քաղցից մեռնելու դէպքեր եղան։ Աշակերտ-աշակերտուհիները դպրոց են յաճախել գըրեթէ կիսամերկ դրութեան մէջ. դասական բոլոր առարկաները, վառելափայտ, և այլ ծախսեր հոգացուել է ընկերութեան կողմից։

6.

ԿԱՐԱԿՋԻ ԴՊՐՈՑ

Նազլու-Չայ Գաւառամասում

Բարեւար պ. Ալէքսանդր Մելիք-Ազարեան

Ուսումնարանը բացուել է Հոկտեմբեր 20-ին, փակուել Մայիս 27-ին, կանոնաւոր դասաւանդութիւնը սկսուել է Դեկտեմբեր 11-ին, ուսանողների թիւը ձմեռային ամիսներում եղել է 35, (2-ը Աղջիկ) որոնցից 15-ը նոյն գիւղից, իսկ մնացեալ 23-ը եկել են մօտակայ Տերաբատ և Կարաջալի գիւղերից։ Դպրոցը ունեցել է 5 բաժանմունք և 2 ստորաբաժանմունք, պաշտօնավարել է մէկ ուսուցիչ շաբա-

թական 30 դասով։ Դասական առարկանները բաշխուել են ձրի։ Դպրոցի շէնքը վարձու է և խիստ անյարմար։

7.

ՌԱՀԻՆՑԻ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑ

Ուրմիի Գաւառում

Բարեւար պ. Տիգրան Աճրիկեան

Այս գիւղի դպրոցը աչքի է ընկնում իր աշակերտ աշակերտուհիների շատութեամբ և նոցա ցոյց տուած յառաջադիմութեամբ։ Դպրոցը ունի իր սեփական յարմարաւոր շէնքը, բաղկացած երեք դասարաններից։ Այս շէնքը կառուցուել է գիւղացիների ջանքերով և զոհողութեամբ, մի քանի տարի առաջ. սակայն եղած ծախսի մի մասը պարտք էր վերցուած տոկոսով, որը ցարդ մնացել է և չեն կարողացել վճարել. պատճառը վերջին տարիների սղութիւնն է։ Տղամարդկանց մեծ մասը բացակայ է գիւղից. վերջին տարեշրջանում պանդխտողների թիւը 150 ի է հասել։

Ուսումնարանի բացումը եղել է Նոյեմբեր 6-ին, ընդունելութիւնը շարունակուել է մինչև Դեկտեմբեր. ձմեռային ամիսներում ուսանողների թիւը հասել է 94-ի. 52 աշակերտ, 42 աշակերտուհի. գարնան սկիզբներից այդ թիւը սկսել է նուազել մինչև հասել է 25—30։ Դպրոցը շարունակուել է մինչև Մայիս 21-ը։

Այս ուսումնարանը իններորդ տարին է ինչ գոյութիւն ունի. ներկայ տարեշրջանում ունեցել է 4 բաժանմունք և 2 հիմնական դասարան։ տղաները և աղջիկները բաժանմունքներում միասին են եղել։ Դպրոցական ժամերը եղել են 6—7, դասերի տևողութիւնը եղել է 50 րոպէ։ Պաշտօնավարել են երկու վարժուհի և մէկ ուսուցիչ, շաբաթական պարապելով 90 դաս։

Դասական առարկաններ ձրի բաշխուել են միայն 13 չքաւոր երեխաների, մնացեալները գնել են իրանք, ուսումնարանի զանազան մանր-մունր ծախքերը հոգացել են գիւղացիները. նոյնպէս գիւղացոց ծախսով ուսուցիչները շինել են տուել մէկ դուռը, երեք լուսամուտ, մէկ վառարան և չորս գրասեղան նստարաններ։ Աշակերտուհիների ձեռագործների վճակախաղից գոյացել է 42 ղռան։ Յուսալի է մի քանի տարիներից յետոյ գիւղացիք իրանք կարողանան պահել իրենց դպրոցը։

8.

ՄԱԿՈՒԻ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑԸ

Բարեւար պ. Տիգրան Աճրիկեան.

Ատրպատականի հիւսիս արևմտեան ծայրում, Ռուսաստանի և Տաճկաստանի սահմաններին անմիջապէս կից գտնուած այս փոքրիկ բերդաքաղաքում, ուր ապրում են 45—50 տուն հայեր, երրորդ տարին է, որ հիմնուած է այս ուսումնարանը։ Յոյս ունենք որ նա մեծապէս օգտակար պիտի լինի թէ Մակուի և թէ այդ խանութեան շրջանակում ցրուած հայերի համար։

Այս տարեշրջանում դպրոցը բացուել է Հոկտեմբեր

6-ին և փակւել է Յունիս 15-ին։ Երկսեռ սաների թիւը եղել է 50, 31-ը աշակերտ 19-ը աշակերտուհի։ Պաշտօնավարել են մի ուսուցիչ և մի ուսուցչուհի, շաբաթական պարապելով 60 դաս։ Ուսումնարանը ունեցել է չորս բաժանմունք։ Դասականառարկաները բաշխուած են ձրի։ Դպրոցը կազմակերպել է հանդէսներ և երեկոյթ։

9.

ԹՈՎԼԱԼԱՐԻ ԴՊՐՈՑԸ

Միհալըչըգ Գաւառում

Բարերար պ. Արամ Ղազարեան (կտակով)։

Ուսումնարանը բացւել է Հոկտեմբեր 9-ին. սկզբում յաճախել են միայն 12 աշակերտներ, յետոյ նրանց թիւը աւելանալով՝ ձմեռային ամիսներում հասել է 33 ի, որոնցից 5-ը աղջիկ։ Դասաւանդութիւնը շարունակւել է մինչև Մայիսի վերջը։ Դպրոցը ունեցել է 4 բաժանմունք. պաշտօնավարել է մէկ ուսուցիչ. շաբաթական 30 դասով։ Դպրոցն ունի յարմար շէնք, ուսուցչի բնակարանով, որը շինւել է հանգուցեալ Արամ Ղազարեանի կտակի հաշւով։

Հայերը բոլորն էլ թրքախօս են, ագէտ և բոլորովին անտարբեր դէպի ուսումնարանը. այդ իսկ պատճառով ուսուցիչը կիւրակի օրերում ժողովրդին հաւաքել է եկեղեցի և խօսել նրանց, ազգային կրօնական, և կրթական խնդիրների մասին, թրքերէն լեզւով բացատրելով նրանց իրենց պարտականութիւնները։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Հինգ տարի է որ այս դպրոցը հիմնւել է և ուրախալի է տեսնել որ բարձր բաժանմունքի աշակերտները արդէն լաւ խօսում են հայերէն լեզւով։

10.

ԴԱՐԱԼԱՔԻ ԴՊՐՈՑԸ

Սովուչ-Բուլղաղ գաւառում

Բարերար պ. Ստեփան Տէր-Օհանեան

Ուսումնարանը բացւել է Նոյ. 15-ին, փակւել Մայիս 27-ին. ունեցել է 25 աշակերտ միայն, որոնք կազմել են 4 բաժանմունք, պաշտօնավարել է մէկ ուսուցիչ 30 դասով։ Դպրոցի շէնքը վարձու է և շատ անյարմար։ Դասական իրերը բաշխուած են ձրի։

Գիւղի հայերը նայում են դպրոցի վրայ ոչ բարեկամական աչքով, ըստորում ուսումնարանը խլում է նրանց երեխաներին դաշտային աշխատանքներից. այդ է պատճառը որ մշտական յաճախող աշակերտների թիւը 25-ից չէ անցել։ Երբեմն ուսուցիչը ստիպւած է եղել պտտել տները և համոզել ծնողներին որ իրանց զաւակներին չըզրկեն ուսումնարանից. սակայն իզուր։ Ծնողների այս օրինակ վերաբերմունքը ոչ նուազ վատ ազդեցութիւն է անում նաև երեխաների վրայ։ Եօթներորդ տարին է որ ուսումնարանը գոյութիւն ունի սակայն հազիւ թէ աշակերտների մէջ սկսել է համակրութիւն ծագել դէպի ուսումը։

Գիւղացիները ծայրահեղ աղքատ վիճակի մէջ են և խիստ հարստահարւում են գիւղատէր աղայից։

11.

ԻՐԳԻԻԹԻ ԴՊՐՈՑԸ

Ղարադաղ գաւառում

(Պահւում է Ընկերութեան հաշւով)

Երրորդ տարին է որ այս գիւղում սկսել է այս դպրոցը և արդէն գիւղացիները շատ լաւ վերաբերմունք են ցոյց տալիս։ Ինքնաբերաբար վճարում են ուսուցչի ռոճիկի մի մասը - 400 դրան։

Ներկայ տարեշրջանում ուսումնարանը սկսել է Նոյեմբերի վերջերին և փակւել Մայիսի վերջերին. ունեցել է մէկ ուսուցիչ, 50 աշակերտ, 5 բաժանմունքով. ուսուցիչը պարապել է շաբաթական 30-ից աւելի դասեր։

Ղարադաղի ընդարձակ գաւառում, որտեղ կան 27 հայ գիւղեր, 5800 հայ բնակիչներով, այս ուսումնարանով միայն 2 ուսումնարան կայ. ուրեմն հեշտ է եզրակացնել թէ որ աստիճան տգիտութեան մէջ պիտի լինի այդ գաւառի հայ ազգաբնակութիւնը. ժողովուրդը սակայն ուսումնածարաւ է, միայն զուրկ է միջոցներից. շատերը իրանց տղաներին ուղարկում են Թաւրիզ տներում ծառայութիւն անելու և մի կերպ գրել-կարդալ սովորելու։ Ուսման կարիքը սրանց մէջ զգալի է եղել այն հանգամանքի շնորհիւ,

որ Կովկաս պանտխտողները տեսնում են որ առանց շատ ու քիչ կրթութիւն ունենալու չէ կարելի մարդավայել աշխատանք գտնել։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Դպրոցների համար ուսուցչական ժողովի կողմից մշակւած կայ ուսման ծրագիր, որը մշակւած է համապատասխան տեղական հանգամանքների և պահանջների։ Աւանդւում է Հայոց լեզու, Կրօն, Թուաբանութիւն, Իրաղնութիւն, Հայրենագիտութիւն, Հայոց պատմութիւն, Հայաստանի աշխարհագրութիւն, Ընդհ. աշխարհագրութիւն, Ազգային, եկեղեցական և ժողովրդական երգեր, Գծագրութիւն, Գրութիւն, Ձեռագործ և Մարմնամարզութիւն։

Բոլոր դպրոցների գումարն է 11, որոնցից օգտւել են 18 գիւղեր. ուսուցիչ-ուսուցչուհիների թիւն է 20. երկսեռ սաների թիւը 573։

Վարչական անդամուհիների կազմը՝
Նախագահ՝ Մարան Նազարբէկեան
Գանձապահ՝ Մարիամ Բարխուդարեան

Խորհրդականներ՝
Սրբուհի Ամատունի
Արծուիկ Նազարբէկեան
Զապէլ Եղիազարեան
Վարդանոյշ Բաղդասարեան

ՄՈՒՏՔ Հաշուեցոյց 1906 Յուլիս 1-էն

	Ղուռն	կպ.	Ղուռն	կպ.
Կշիռ պատրաստի դրամագլուխ			53518	95
Պ. Տ. Աֆրիկեանից նպաստ ստացած	20000	—		
Անդամավճարներ ստացած	900	—		
Լ. Մանկապարտէզի թոշակներ	520	—		
Դ. Մանկապարտէզի ,,	1430	—		
Համադանից Կ. խան Ջոհրաբեանից	250	—		
Պ. Ստեփան Տէր Օհանեանից նպաստ	1200	—		
Ներկայացումից գոյացած	1241	—		
Պ. Ա. Մկր. Ազարեանից նպաստ 300 րբ.	1530	—		
Պ.Պ. Եղբ. Նազարբէկեաններից նպաստ	2000	—		
Նոյնի մի տարուայ տոկոսը	208	30		
Եղբ. Թումանեաններից տոկոս	1531	19		
Սեան ընկերութիւնից տոկոս	3380	70		
Պ. Ա. Ղազարեանի դպրոցի ծախքը	2976	25		
Զանազան մուտքեր	552	10	37719	54
			91238	49

մինչև 1907 Յունիս 30 ԵԼՔ

	Ղուռն	կպ.	Ղուռն	կպ.
Բաքուի դպրոցի ծախքը	3401	35		
Դարալաքի դպրոցի ծախքը	1243	55		
Դիզա-Թաքայի ,, ,,	2570	10		
Իքի-Աղաջի ,, ,,	2366	75		
Իւրգիւթի ,, ,,	358	30		
Կարակզի ,, ,,	1624	30		
Մաքուայ ,, ,,	2219	55		
Նախիջեան-Թափայի ,,	2170	45		
Ռահվայի դպոցի ,,	4090	25		
Փախկրակլուի ,, ,,	2798	10		
Թովլալարի Ա. Ղազ. դպրոցի ծախքը	2976	25		
Լիլ. Մանկապարտիզի ծախքը	4887	40		
Ղալայի ,, ,,	4309	85		
Զանազան ծախքեր և ռոճիկներ	4762	—		
Զանազան նպաստներ տրուած	446	—	40221	20
Կշիռ առ 1 Յուլիս 1907			51017	29
			91238	49

ՄՈՒՏՔ Հաշուեկշիռ Ա. Ղազարեան դպրոցի

	Դռան	կպ.	Դռան	կպ.
Դրամագլուխ առ 1-ն Յուլիս 1906			53683	98
Տոկոս 1906/1907 Յուլիս 1-ն			4831	56
			58515	54

1906 Յուլիս 1-ից մինչ 1907 Յունիս 30 ԵԼՔ

	Դռան	կպ.	Դռան	կպ.
1906/1907 ուսումնակ. տարեշրջանում իւր Թօվլալար գիւղում ունեցած դըպրոցի համար ծախք է եղել			2976	25
Իւր զուտ դրամագլուխը Եղբ. Թումանեանց մօտ 9 %			55539	29
			58515	54

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

«Ազգային գրադարան»
NL0211241

Խնդրուած է դրամական նպաստ, նուէրներ, գրական աշխատութիւններ, ընծայագրութեան գըր-քեր, պարբերական հրատարակութիւններ. նա-մակ և այլն ուղղելի Վանքեայ Տնօրէնի.

Société [illegible] de Bienfaisance des [illegible]

Arméniennes de France

PARIS [illegible]